Եվրոպիդ - Ֆոդոս
Պրոֆ. Ա. Թուրգութ Տ. Թեոդ. Կրուսեմբերգաց

ՓՈՒՂԱՔ

ԹԻՒ 1161 ՇԱԲԱԹ 1877 ՄԱՐՏ 19

ԱԶԳԱՅԻՆ

Եթէ լրագրութիւնը ժողովրդեան թէ՛ դոհունակութեան և թէ՛ միանդամայն ցաւոց ու վշտաց թարգմանն ըլլալու անհրաժեշտ պարտաւորութիւնը չունենար, ցաւոց ու վշտաց վերաբերեալ դրութեանց հրատարակութիւնը զանց պիտի ընէինք, մանաւանդ այս օրերս՝ յորս այդպիսի գրութիւններ յաճախ տեսնելու դժբաղդ հարկին մէջ կդտնուինք։ Աւասի՛կ, այս անդամ ալ կհրատարակեմք դառնութեամբ սրտի՝ Մարզուանէն փետր. 18 թուով առ մեզ գրուած հետեւեալ նամակը, որ անհաճոյ անցք մը կնկարագրէ։

• • • Խմբագիր •

Ի՛նչ որ երկու տարի յառաջ Իզմիրի մէջ պատահեցաւ, նոյնը ամսոյս 15ին երեքշաբթի օր քաղաքիս մէջ պատահեցաւ։ Խնդիրը տան մը գրաւման վրայ է։ Մալաթիացի Գ. անուն անձ մը կյաջողի Ամասիոյ կառավարչէն հրամանագիր մը բերել տալ՝ Ց. Պիննուհանեանի վրայ ունեցած փոքրիկ առնելիքին փոխարէն այդ տունը գրաւել, որ Պիննուհանեանի կնոջ բաղմաժամանակեայ սեպհականութիւնն է, եւ կառավարութեան տումարներն ալ կկիսյեն։

Պիննուհանեան, ինչպէս մինչեւ ցայսմամ բաղմիցս Ամասիոյ կառավարութենէն թախանձագին խնդրած էր՝ հաշիւը տեսնել, եւ եթէ մալաթիացիին պարտական մնայ՝ վճարէ • այս անգամ ալ տեղական կառավարութեան կաղաչէ հաշիւը տեսնել, եւ չդպչիլ տանը՝ որ իւր կնոջն է։ Տեղական կառավարութիւնն ալ խնդրոյն քննութեան զբաղած ատեն, դարձեալ հրամանագիր կուգայ Ամասիայէն՝ տունը մալաթիացիին յանձնել առանց ո՛ր եւ է պայմանաժամի։ Առաջնորդարանէն կառաջարկուի Ամասիոյ կառավարչին՝ յետաձգել գրաւման գործը, եւ արձանագրութեանց տումարներէն ստուգել տան ո՛րու ըլլալը • սակայն այս առաջարկութիւնն ալ անլսելի կմնայ, եւ վերջապէս տունը կպարպուի հետեւեալ տխուր ու ազետալի կերպիւ։

Տեղական կառավարութիւնը կհրամայէ ոստիկանութեան՝ երթալ տնեցիքն ու կահ կարասին թափել դուրս, առանց պայմանաժամի։ Հարիւրապետ Հասան աղան տասնէն աւելի ոստիկան առնելով, առանց քահանայ, քէհեա կամ մըխտար հետն ունենալու, իւր պաշտօնը եւ իրեն տրուած հրամանն ի գործ դնել կիսութայ։ Տանը առջեւ հասած ատենին, դուռը կդարնեն, ներս կը մտնեն, սենեակներուն դրներն գոց գտնելով կսկսին զարնել կոտրել, պատուհաններն չարաչար ջարդելով ներս կթափին • ո՛հ, ի՛նչ ահ ու դող զաւկի տէր աղնուական եւ տարիներէ ի վեր անկողնոյ ծառայող թշուառ հօր եւ խեղճ մօր մը • հիւանդը շնչասպառ կմնայ • մայր ու զաւակներն մեռաւ գոչելով ողբ ու կոծ կընեն • վլվլուկ, լուտանք, ծեծ ու հարուած, հարիւրապետ, զինուորներ ու ղէնք, բաղմութիւն փողոցին մէջ, հայ ու տաճիկ, 500էն աւելի • հարսներ, աղջիկներ ու թոռներ, ի տես ամենեցուն ոստիկանաց ճիրան մատնուած, անխնայ դուրս տիղմերու մէջ կթաւալին • տան կահ կարասին « ես բեռնակիր եմ » ըսողներու ձեռք մատնուած, հարսներու ոսկիներ ու մատանիներ դրպաններու գոհ դացած, ոստիկանաց տուած հարուածներէն թեւերնին կոտրած, գլուխնին բաց, ոտքերնին բոպիկ, արեան հեղեղներ երեսն ի վար վազելով, օգնութի՛ւն՝ օգնութիւն կկանչեն. խեղճ հայրերնին ինքիրմէն անցած, եւ անկողնոյն չորս կողմէն բռնուած՝ դռնէն դուրս հանելով դրացիի մը տուն բակը կձգուի • վերջապէս, չերկարեմք, դրները կնքուելով ու պահապան զինուորներ թողլով, կձգեն կերթան, «իշխէ պէօյլէ օլմալը» ըսելով։

* * *

Ամասիոյ կառավարիչն ծանր պատասխանատուութեան ներքեւ կդտնուի, այս անցից պատճառաւ։ Մէկուն պարտուց համար ուրիշի մը տունը դրաւել, և՝ այս կերպով, ո՛ր օրէնք և ո՛ր արդարութիւն կներէ։ Մեք տարակոյս չունիմք, թէ կայսերական կառավարութիւնը պիտի բարեհաճի փութալ բացատրութիւն պահանջել, քննութիւն բանալ, և տնօրինել զարժանն յօրինակ և ի զգաստութիւն այլոց։

Պիլէճիկի ազգայնոց կողմանէ բաւական ժամանակէ հետէ խնդիր կըլլար Պատրիարքարանի, Պիլէճիկի վիճակը Բէօթահիոյ առաջնորդութենէն զատել և առանձինն առաջնորդութիւն ընել։ Այս խնդիրը կընէին, առարկելով թէ Բէօթահիոյ հետ ըստ հոգեւոր իշխանութեան միացեալ, բայց ըստ տեղւոյն իրարմէ հեռի ըլլալով՝ առաջնորդական խնամքէ զուրկ կմնան, և թէ՝ իրենց դլխուն վրայ առանձինն առաջնորդ ունենալով, մեծապէս կօգտին։

Խառն ժողովն, երեքշաբթի աւուր նստին մէջ վերջապէս որոշեր է ընդունիլ պիլէճիկցւոց խնդիրը, և հրահանգ ղրկել առանձինն ժողովներ կազմել ու առաջնորդ ընտրելու համար։

Միանդամայն որոշուեր է նոյն նստին մէջ, Բէօթահիոյ առաջնորդական վիճակին վրայ աւելցուցեալ Աֆիոն-Գարահիսարը եւ ուրիշ մէկ քանի տեղեր, որոնք մերձաւորութեան և այլ պատճառներով միացման յարմարութիւն ունին։

Առաջնորդական վիճակաց բաժանման կամ միացման համար՝ ուրիշ դաւառներէ ալ խնդիրներ եղած ըլլալով, Պատրիարքարանն անցեալները յատկապէս մասնաժողով մը կազմեց, այս մասին պէտք եղած կարգադրութիւններն ընելու և տեղեկագրելու համար։ Սակայն շատ մը մասնաժողովներու պէս այս մասնաժողովոյն ալ միան կազմութիւնը լսուեցաւ, և խափանուեցաւ։ Գիտելով առաջնորդական վիճակաց կարգադրութեան խնդրոյն կարեւորութիւնը, կառաջարկեմք Պատրիարքարանի՝ որ յատկապէս խնամ տանի, եթէ կուզէ որ դաւառաց մէջ բաղմաթիւ ազգայինք այլ եւս անհոգ ու անխնամ չմնան։

Դարձեալ երեքշաբթի օրը որոշուեր է հեռադրել Գաղատիոյ հրաժարեալ առաջնորդ Տ. Արիստակէս եպիսկոպոսին, որ շուտով մայրաքաղաքս դայ։ Շա՛տ ուշ մնաց Պատրիարքարանը • որովհետեւ՝ անդին, ի շնորհս Արիստակէս եպիսկոպոսի, ժողովուրդն արդէն երկպառակեալ՝ Արիստակէսեան և Հակարիստակէսեան՝ սկսեր են կռուիլ մէկմէկու հետ։ Զարմանալի է արդարեւ • եպիսկոպոսն ինքն քանիցս հրաժարագիր ղրկեց ի Պատրիարքարան, և հրաժարականը ընդունուեցաւ • ինչո՞ւ արդեօք ապա սկսաւ դարձուածներ ընել և ջանալ վերահաստատուիլ այդ պաշտօնին մէջ, յորմէ յանչափս ղղուած կձեւանար։

Նախորդ թերթով առ արժ. Տ. Բառնաս Ծ. վարդապետ խօսք մ՛ուղղած էինք հրապարակաւ։ Շատ ցաւեցանք, ի վերջոյ ստուգելով, որ Նորին արժանապատուութիւնը փունջի քաջալերիչ և բաղմամեայ բաժանորդներէն մին է, և ո՛չ թէ ուրիշ Բառնաբաս վարդապետ մը, ինչպէս կարծած էինք մեք սխալմամբ։ Պարտաւոր եմք, դարձեալ հրապարակաւ ներումն խնդրել Արժ. Տ. Բառնաբաս վարդապետէն, մեր այս սխալման համար՝ թէեւ անգիտութեամբ և յակամայս գործած եմք։

Հաճութեամբ կհրատարակեմք հետեւեալն՝ որ Իւսկիւտարի Սէլամիյէ թաղին ազգայնոց կողմանէ այս անգամ Երեսփոխան ընտրեալ Պէկեան մեծ. Թադէոս Էֆէնտիի առ արժ. նախագահն ընտրողական ժողովոյ ուղղած գրոյն պատճէնն է։

Գերապատիւ Ս. Հայր

Ընդունեցայ Ձեր սրբութեան գրութիւնը որով կը ծանուցանէք ինձ Իւսկիւտարու Սէլամիէ թաղին կողմէն Ազգային Երեսփոխան ընտրուիլս • և կը խնդրէք որ, ըստ օրինի հաւանութիւնս հաղորդեմ առ Ձեզ։ Ես արդէն Երեսփոխանութենէն կամովին հրաժարած լինելով, մտադիր էի տակաւին ժամանակ մը ազգային գործերէ քաշուած մնալ, առանց զանց առնելու իմ առ Ազգս ունեցած պարտականութիւններս, զորս ըստ կարի կատարելու փոյթ ունեցած եմ տղայ հասակէս ի վեր։ Սակայն Սէլամիէի պատուարժան թաղեցիք իրենց ընտրողական քուէովը իմ այս մտադրութիւնս փոխելու դիս կը մղեն։ Ժողովրդեան ձայնը նուիրական է. ղայն յարգել պարտականութիւն մի է • երբ այդ ձայնին առջեւ բարձր առաւելութիւն և արժանիք ունեցող վսեմ անձ մի կը խոնարհի, ա՛լ ինձ ուրիշ բան չմնար ընել, բայց եթէ նորա օրինակին հետեւիլ։

Ձիս ընտրողներուն իմ շնորհակալութիւններս մատուցանելնուդ հետ մէկտեղ,

խնդրեմ, Հայր սուրբ, որ ապահովցնէք զիրենք թէ իմ սկզբունքս նոյնն է ի՛նչ որ էր, և թէ իմ պաշտօնավարութեանս միջոցին իմ անխոտոր ընթացքս պիտի լինի ազգային նուիրական շահուց անվեհեր պաշտպանութիւն։

Հաճեցէք և դուք ընդունել իմ մեծարանքս, որով մնամ սրբութեանդ

Ամենախոնարհ

Թ. Պէկ.

ՊԱՐՏ ԵՒ ՄԱՐՏ

ԺԴ.

(16 Մարտ 1877)

ԱՌ ՍԻՍԱԿ

Լռութիւնն կը ծանրանայ հոգիս վրայ. վիշտն, որպէս զի ամոքի, պէտք է արտայայտուի։

Այլ գո՞ պիտի լինի՞ս արդեօք լսելով իմ ողբ, Դու որ կը գանգատէիր իմ լռութիւնի վրայ, մոռնալով մի վայրկեան, բազմազբաղ եւ բազմավիշտ հոգի՛, թէ մի մեծ կորուստ շանթահարած է զ'իս եւ դատապարտած այս երկար լռութիւնի . . .։

Այո՛, կորզուեցաւ վերջապէս մեր գիրկէ այն երիտասարդ, որ «համակրական եւ բանաստեղծական» հիւանդութիւնն տրտմութիւն եւ մտատանջութիւն կ'աղդէր անթիւ սիրտերի, որ վիճակին վրայ, մօտաւոր թէ հեռաւոր, լուր կը խնդրուէր ամեն օր . . .

Գերեզմանի մէջ տեսայ զ'այն զ'որ օրրանի մէջ էի տեսած, որ մանկական խաղերին ընկեր էի եղած, ընկեր նաեւ, եւ, իբր անդրանիկ եղբայր, առաջնորդ իւր ուսումնական մրցանքների մէջ։

Ասեցի՞ թէ գերեզմանի մէջ տեսայ Արամ։ Ո՛չ, աւա՜ղ, դէթ այդ սիրոյն չ'ունեցաւ իմ անմխիթար սիրտ։ Հեռադիրն գուժեց իւր մահ, քառասուն օրեր կան արդէն . . .

Այսպէս վեց ամիսներէ յառաջ, հեռադիրն աւետեց իւր պսակում մի Եւրոպական ուսումնարանի մէջ։

Այն օր, երանագո՛յնն եւ փառաւորագոյնն իւր կեանքի մէջ, այն օր, ուր մեծահամբաւ գիտունների ձեռքէն կընդունէր իւր եռամեայ, իւր տասամեայ անդուլ աշխատանքի արժանավայել տրիտուրն, լսե՞ց արդեօք այն չարագուշակ ձայն, որ կը մրմնջէր իւր ականջի. «Երբէք դափնին չ'էր գեղազարդած մի աւելի վեհափայլ ճակատ. այլ այդ ճակատ, ո՜ տարաբախտ երիտասարդ, այդ ճակատ պիտի սառի այն եղանակէ յառաջ, ուր կը վերընձիւղի դափնին»։

Լսե՞ց արդեօք Արամ այդ գուժաբեր շշուկ. կ'երկուանամ. զի բժիշկին ներկայանալով նոյն օր, սպէս խօսեցաւ նմա. «Այսօր աջողումով կ'աւարտեմ դպրոցական ասպարէզս. ճակատս վրայ կը տեսնես դորա անհերքելի ապացոյց։ Հարկ է այժմ որ դարմանեմ վաստակաբեկ մարմինս. զի բազմապատիկ աշխատանքով միայն կարելի է ստանալ այն աւելի վառահեղ պսակ, զ'որ ապագայն կը պատրաստէ ում անթերի կրցաւ կատարել իւր պարտեր առ իւր ընտանիք, առ իւր հայրենիք եւ առ մարդկութիւն»։

Եկուլապի աշակերտն մի արդահատական տկնարկ նետեց այն երիտասարդի վրայ, որ ընութիւնն այնքան առատօրէն օժտած էր միտքն, սիրտն եւ մարմինն, եւ անկաւ իւր շուրթերէ այն պատուէր զ'որ կարդացինք Անդծնէի մէջ. Ո-ղէ-ոբէ՛. մանուանդ դէպ հարա։

Եգիպտո՜ս, ո՞վ չէ ցանկար տեսնել այդ երկիր. զի

«Եբբեն 'ի խառարոպ հուրեանէ գիրեղերաց,
Եգիպտոս նախ լուսոփաղփուն պարզեաց դրշ ելբրեանն».

այն գետի եղրներին վրայ, որ կ'ասէ առասպելն, ամպերին մէջ աղբիւրն, Նեղոսի եղրին վրայ ո՞վ չէ ըղձար համբուրել հետքերն այն նախախնամային աղջիկի, որ ջուրէն ազատեց Մովսէսն, որ սարկութենէ ազատեց Իսրաէլն։

Այլ բնապէս կը փափաքէր Արամ մի ողջոյն տալ – եւ այդ հուսկ ողջոյնն եղաւ, աւա՜ղ, – հայրենական երկինքին, այն «կապոյտ երկին»ի, ում համար օտար երկիրի վրայ քանի տարիներ հառաչած էր Մինեռնի նման. կը փափաքէր ողջագուրել մի անդամ – եւ այդ յետին ողջագուրանք եղաւ – իւր կաթողին ծնօղներ եւ սիրելիներ։

Ա՜հ . . . մի տխրագին օր եղաւ այն, ուր տեսանք զ'այն Կոստանդնուպօլիսի մէջ։ Դալուկն, մահի դալուկն նկարուած էր իւր դէմքի վրայ. կարծեցի մի վայրկեան աչքերիս առջեւ ունենալ Միլվօսի օրհասականն . . .

Սակայն . . . այն երկամեայ միջոցի մէջ, ուր անբաժան կենակից եղայ նմա, կամ մանաւանդ հանդիսատես իւր յամր մահի, չը լսեցի մի օր այն ազէկիզիկ բառերէ զ'որս ընութիւնն կ'ուղղէր «անխորհուրդ պուրակ»ի մահամերձ այցելուն երբէք չը բաղդատեց զ'ինք այն թերթի որ, դալարագեղ եւ փայլուն վեց ամիսներէ յառաջ, ժպտոյն եւ գօսացեալ՝ այսօր կը դողդողար ոստին վրայ, եւ ղոր վաղ ոտնակոխ պիտի անէին մարդեր . . .

Ընդհակառակն, առաջիկայ գարունին վրայ կը խօսէր, որ իւր կեանքի ամենէն գեղեցիկ, ամենէն երանաւէտ գարունն պիտի լինէր, կ'ասէր, զի ամենէն վիպային, ամենէն բանաստեղծական տիքին մէջ պիտի գտնէր զ'այն . . . Նա, որ դեռ ոչ իսկ քսանամեայ պիտի թողուր աշխարհն, մատնանիշ կ'անէր ինձ, ո՜ Սիսակ, քսաներորդ դարի արշալոյսն. «Մի մեծ դար պիտի լինի այն, կ'ասէր ինձ մի յուզեալ եւ սրտատրոփ ձայնով, դարերի մեծագոյնն պիտի լինի։ Այն բարոյական սկիզբներ որք կ'ոտընհարուին այսօր, պիտի վերհալեսին այն վեհագոյն դարի մէջ. այն ժողովուրդներ որք մի անմիտ խնամակալութիւնի տակ են այժմ, չափահաս պիտի լինին եւ ինքնադլուխ պիտի վարեն իւրեանց ճակատագիր. այն ժողովուրդներ որք կը հեծեն լուծի տակ, պիտի փշրեն իւրեանց շղթայներ»։ Եւ յանկարծ աւելի ոգեւորուած, «Զե՞ս նշմարեր, կ'ասէր ինձ, այն արշալոյս որ կը ճառագայթէ Մասիսի գագաթին վրայ . . . Եւ ես չ'եմ երազեր բանաստեղծին պէս . . .

Սուրբ քաղաքին մէջ, Տէրունական դերեզմանէն ոչ հեռի, մի շիրիմ կայ, որ կը կրէ անունն այն երիտասարդի, որ այսպէս կը խօսէր ինձ չորս ամիսներէ յառաջ։

Ես հաղորդակից եղայ իւր սիրտի աղնուագոյն զգացումներին, իւր միտի վեհագոյն խորհուրդներին։ Մայրս հաւաքեց իւր վերջի՛ն շունչ, իւր վերջի՛ն հրաժեշտ։

Այս միակ տխուր սիրոյն պիտի լինի մեր կեանքի զ'որ երկին վճռեց չը լինիլ բարեբաստիկ։

Ե. Տէր-Գրիգորեան.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Զորեքշաբթի օրէն յետոյ, եւրոպական մայրաքաղաքներէն եկած հեռագրերը ուշադրութեան առնելով կիմանամք որ Իկնաթիէվ զօրավարն Պերլինի մէջ Պիզմարգ իշխանին հետ ալ տեսնուեր և վերջապէս աճապարանօք Բեռդրսպուրկ ուղեւորեր է։

Երկու օր յառաջ հարկադրեալ էինք սպասել զօրավարին ի Բեռդրսպուրկ վերադարձին, որպէսզի վերջնական տեղեկութիւն մ'առնուլ կարելի ըլլայ։ Բայց հեռագիրները՝ որ ժամէ ի ժամ նորանոր լուրեր բերելով խորհող միտքերը կշփոթեն և հնար չը թողլով մէկ կարծեայ կամ դաղափարի վրայ մնալ, այս անդամ ալ տարբեր տեղեկութիւններ հաղորդելով բոլորովին Բեռդրսպուրկի վրայ դարձող հասարակաց ուշադրութիւնը վերստին և՛ դէպ ի Անդղիա դարձուցին։ Անդղիա, սկսան ըսել, առաջարկեալ բարեկարգութեանց դիրը ստորագրելու հակամէտ է, Ռուսիոյ զինաթափութեան խնդիրը յետաձգելով, թէ՝ դարձեալ ամենայն փութով բանակցութիւն կը լլայ Ռուսիոյ ու Անդղիոյ կառավարութեանց մէջ, և թէ՝ թո՛ղ խաղաղութեան համար այլեւայլ կողմերէ յայտնուած յոյսերը, նոյն իսկ Պիզմարգ իշխանը աղդային ժողովոյն մէջ խաղաղութեան անվրդով մնալուն համար յոյս յայտներ է։

Եթէ դարձեալ տարբեր հեռագրեր յաջորդելով չշփոթեն զմեզ, կրնանք յիշեալ լուրերէն մակարերել թէ առաջարկեալ դիրը կառավարութեանց կողմանէ համաձայնութեամբ պիտի ստորագրուի։ Սակայն խնդրոյն ամենածանր կողմը կմնայ. այսինքն՝ դիտնալ թէ Բ. Դուռը պիտի ընդունի՞ այդ դիրը, թէ՝ մերժէ։ Այդ դիրը, եթէ արդէն դեսպանաժողովոյ կողմանէ առաջարկուած և Բ. Դրնէն մերժուած կէտերը կպարունակէ, չկարծուիր թէ ընդունուի կայսերական կառավարութենէն։ Անշուշտ այս դրոյն վրայ է, որ նախարարք յաճախ նիստ կընեն, և քանիցս ալ կայսերական պալատը ժողով կազմեցին ընդ նախագահութեամբ օդոստափառ Սուլթանին. ինչպէս նաև այս հինգշաբթի օր, յորում, կհաւատան թէ վերջնական կերպիւ որոշուեր է չընդունիլ՝ ի՛նչ առաջարկութիւն որ Թուրքիոյ անկախութեան ու ամբողջութեան ճնշասակար է։ Այս ժողովին մէջ, միանդամայն նկատողութեան առնուեր է՝ Սև ծովու բերնէն օսմանեան նաւատորմը հե՛ռ քաշելու, և աղդային պահպան զօրք չկազմելու համար եղած առաջարկութիւնները, և որոշուեր է թէ ասոնք կառավարական ներքին դործեր ըլլալով, ոչ ոք արտաքուստ իրաւունք չունի միջամտել։ Նոր կազմ երեսփոխանական ժողովոյ մէջ ալ այսպիսի յայտարարութիւններ կըլլան ամենայն եռանդեամբ։

Այսպէս կրնամք համառօտել վերջին երկու աւուրց մէջ այլեւայլ կողմերէ տրուած լուրերն ու տեղեկութիւնները, ընթերցողին թողլով իմաստասիրել և դարձեալ սպասել երկայնմտութեամբ, թէև երկայնմտութեան չափն անցաւ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օդոստ. Սուլթանն երէկ ցերեկ աղօթելէն յետոյ, զինուորական դործոց նախարարին հետ շոգենաւով Վոսբորի կողմերը շրջագայելու, և զրահաւորներն աչքէ անցուցանելու ելաւ։

— Պէլկրատէն Թայմըզի դրեր են, թէ Սուլթանին վերջին հրովարտակն տակաւին ի պաշտօնէ Միլան իշխանին տրուած չէ։ Սերվիոյ գիւղերէն ալ օսմանեան զօրքն ելնելէն յետոյ պիտի տրուի։

Բայց, հրովարտակը տանող Բէրթէվ էֆէնտի քանի մ'օրէ հետէ դարձած է մայրաքաղաքս։

— Թունուսի զինուորական դործոց նախարար Բիւսթէմ փաշա՝ որ մայրաքաղաքս կգտնուէր, այսօր կմեկնի։ Հինգշաբթի օրը վերջին անդամ օդոստափառ Սուլթանին ներկայացաւ։ Նորին վեհափառութիւնը հրովարտակ մը և ծանրադին սուր մը յանձնեց անոր՝ Թունուսի Պէյին տանելու համար։ Թունուսի դըլխաւոր նախարար Խայրէտտին փաշայի

և իրեն ալ՝ մէկմէկ ականակուռ տուփ ընծայեց.

— Կըսեն, թէ Վիէննայի օսմանեան դեսպանը Աւստրիոյ գլխաւոր նախարարին հետ տեսնուած ատենը ուզեր է իմանալ, թէ Աւստրիոյ կառավարութիւնն ի՞նչ պիտի ընէ եթէ պատերազմ բացուի։ Նախարարը պատասխաներ է, թէ Աւստրիա չեղոք պիտի մնայ մինչև աստիճան մը. իսկ եթէ Ռուսիա Պուլղարիոյ մէջ թագաւորութիւն հաստատելու ելնէ՝ այն ատեն պիտի հարկադրի դիմադրել։

— Մայրաքաղաքիս ամերիկեան դեսպանը խնճոյք մը տուաւ ի պատիւ օտար ներկայացուցչաց։ Գարատաղի պաշտօնակալք ալ ներկայ էին։

— Վագրթ երէկ ի պաշտօնէ հերքած էր՝ ռուս գաղագներու օսմանեան սահմանն անցնելով օսմանեան զօրաց հետ կռուի բռնուած ըլլալուն լուրը, զոր Պարիզի հրատարակած էր՝ ոտուգութիւնը տարակուսելի թողլով։

— Խէյալ անուն տաճիկ զաւեշտական լրագրոյն արտօնատէր Գասապ Թուտորի էֆէնտի՝ որոյ դէմ կառավարութիւնը դատ բացած էր, եռամեայ բանտարկութեան դատապարտուեցաւ՝ հինգշաբթի օրը դատաստանը տեսնուելով։ Նոյն օրը բանտարկուեր է ըստ դատավճռոյն։

— Մայրաքաղաքս դտնուող չէրքէսներուն՝ գլխաւորները՝ հինգշաբթի օրը իրենցմէ մէկուն տունը ժողովուեր, և պատերազմ բացուած ժամանակ իրենց ընելիք օգնութեան միջոցներուն վրայ երկարօրէն խորհրդակցեր են։

— Ռումելիի երկաթուղւոյն բաժնետոմսերուն վիճակահանութիւնը կկատարուի այսօր, ըստ սովորութեան, արքունի փողերանոցին մէջ։

— Վիէննայի լրագիրք կգրեն, թէ Ռուսիայէն Գարատաղ անդադար արմտիք կղրկուի, մէկ տարուան համար։ Առ այժմ ինը շոգենաւ Գաթարօ հասեր են։

— Սերտարը-էքրէմն դէպ ի Դանուբ կուղևորի քանի մ՝օրէն։

— Լոնտոնի օսմանեան դեսպան Միւղիւրիւս փաշա, իւր դստեր հետ, պալատը գացեր, թագուհւոյն հետ տեսնուեր, և սեղանակից ըլլալու պատիւն ունեցեր է։

— Կըսուի, թէ անցեալները աքսորեալ Բամիզ փաշա և Ուզուն-էֆէնտի Բիզա պէյ ալ՝ մօտերս պիտի դառնան։

— Հեռագրութեան ու թղթատարութեան վերատեսուչ Եավէր փաշա՝ դատ պիտի բանայ Լէվընդ Հէրըլտ լրագրոյն դէմ, ծանր յօդուածներ գրած ըլլալուն համար։

— Ինպաստ կարօտելոց Պուլղարիոյ, մայրաքաղաքիս անգղիական դեսպանին նախագահութեամբ կազմուած մասնաժողովոյն ձեռօք՝ մինչև յարդ 19 հազար 64 անգղիական լիրա հաւաքուեր է։

— Գարատաղի պաշտօնակալք՝ որ չկրնալով համաձայնիլ, այսօր պիտի մեկնէին, Զէթինէէն եկած նոր հրամանի մը վրայ հարկադրեր են տակաւին մնալ։

— Մոսկուայի կարօտելոց մասնաժողովն որոշեր է՝ 20 հազար բուպլի ղրկել Գարատաղ, եթէ Գարատաղի և Բ. Դրան մէջ դարձեալ պատերազմ բացուի։

Յունաստանի ազգային ժողովը որոշեր է, 10 միլիոն ֆրանգի փոխառութիւն մ՝ընել՝ զինուորական պատրաստութեանց համար։

— Ռուսաց կայսեր թոռն՝ արշիդուքս Վլատիմիրի մեծ որդին մեռեր է։

— Անգղիոյ և Իրլանտիոյ մէջ այս տարի 1692 լրագիր կհրատարակուի։

— Գաղղիոյ ազգային ժողովն այս անդամ 22 անդամներէ բաղկացեալ մասնաժողով մը կազմեր է, քննել տեղեկագրելու համար, թէ Գաղղիոյ մէջ կայսրութեան հաստատութենէն ի վեր դրսէն օ՛րչափ փոխ առնուած է, թէ՝ այս փոխառութիւնք Գաղղիոյ դրամատարց օ՛րչափ վնաս պատճառեր են, և թէ՝ ի՞նչ միջոց պէտք է, յայսմ մասին երկրին շահերն պաշտպանելու համար։

— Անցեալ 1876 ին, Ամերիկայի հանքերէն 17 միլիոն 70 հազար լիրայի ոսկի և արծաթ դոյացեր է։ 17 տարիէ ի վեր 211 միլիոն 326 հազար անգղիական լիրայի ոսկի և արծաթ արտադրեր են այս երկրին հանքերը, 153 միլիոնը՝ ոսկի, և մնացեալն՝ արծաթ ըլլալով։

— Անցեալները գրեցինք, թէ Պարսկաստանի մէջ ոսկիի հանք մը գտնուեր է։ Վերջին տեղեկութիւնք հետևեալ կերպիւ կուղղեն այս լուրը։ — Թափառական աղքատիկ գործաւոր մը գետինը փորած ատեն, փոս մը երևան կելնէ. հոն մտնելով կտեսնէ եօթը գուբ՝ ոսկիով լի, և ասատիկ ուրախութենէն կիյնայ կը մարի և կմեռնի։ Շահը լսելով՝ ոսկիները բերել կուտայ, և կհաշուի թէ 3 միլիոն լիրայի չափ արժէք ունի։ Շահը խսկոյն կհրամայէ պարգև տալ գործաւորին ժառանգորդաց, և միանդամայն թոշակ սահմանել։

Պարսից Շահն այս օրերս ուրիշ բաղդաւորութիւն մ՝ալ ունեցեր է։ — Պէնտէրպուշիրի հռչակաւոր վաճառականներէն Հաճի Մէհմէտ Ալի անուն մէկը՝ որ անղաւակ է եղեր, մեռնելով՝ մէկ կըտակը ելեր է, որով՝ 2½ միլիոն լիրայի չափ եղող հարստութիւնը՝ Շահին կթողու։

— Հունգարիոյ զօրավարներէն մէկն, Կիյլոմ անուն, ինքզինքն սպաններ է, բայց պատճառն դեռ յայտնի չէ։

— Գերմանիոյ լրագրապետաց մէկը եռամսեայ բանտարկութեան դատապարտուեր է, երից կայսերաց միաբանութիւնը՝ Գերմանիոյ համար իբրև զնասակար հրատարակած, և հասարակաց վրայ դէշ ազդեցութիւն ըրած ըլլալուն համար։

ՀՈՂ

Այս ամսոյս մէջ խել մը հիւանդութիւններ երևան կելնեն։ Ամենէն պարզն ու անվտանգը՝ որ հոգ ըլլալ կկարծուի, շատ անդամ դէշ հետևութեանց առիթ կուտայ։ Դժբաղդաբար այս հիւանդութենէն բռնուողներն շա՛տ կըլլան, մանաւանդ ա՛յն տեղերը՝ յորս երեկոյթներ ու ցայգահանդէսներ յաճախ կըտրուին. բժիշկք բիւրաւոր փորձերով ապացուցած են՝ ուշ քնանալուն, և ամբողջ դիշերներ պարելով ու արբեցութեամբ անցուցնելուն բաղմադիմի վնասները. բայց, մարդիկ՝ այս վնասներն դիտնալով հանդերձ՝ դարձեալ չարաչար և անպդտյշ կվարուին։ Պարելու ատեն փոշին ու կազին ըրած վնասները՝ մէկ կողմէն, և մերթ քրտնիլ ու մերթ հանգիստ առնելու համար դադարիլն՝ միւս կողմանէ մարմնոյն համար մեծամեծ վտանգներու դուռ կբանան, ցուրտն անդգալապէս ներս սողոսկելով։ Հաղա՛ր երանի անոնց, որ միայն հարբուխէ կբռնուին և պարզ հաղ մը կըլլան. սակայն շատերն՝ տակաւին իրենց այս վիճակին մէջ անդգոյշ՝ դարձեալ ուզածնին ուտելով, ուզածնի՛ն ընելով, նորանոր և ծանր հիւանդութեանց տեղի կուտան, մինչդեռ պարտին ամեն զգուշութեան միջոց ի գործ դնել՝ այդ հարբուխն ու պարզ հաղն իրենց վրայէն հալածելու համար։

Հաղը իւր պարզ վիճակին մէջ բժշկի պէտք չունի. կրնայ անցնիլ առանին դեղերով ու բանջարեղէն կերակուրներով. եօթեւ բեւեռաւը՝ զոր բժիշկները յաճախ կգործածեն, առանց դեղագործի դիմելու՝ կրնանք մեք մեզէն պատրաստել, հետևեալ կերպիւ։

Պէտք է առնուլ 16 տրամ ՀՆՏՕՎ (հաթէմ), 8 տրամ ՏՕՎ (էպէմկիւմէճի), 4 տրամ ԽՕԽԼԷԽՕ (կէլինճիք չիչէյի), 6 տրամ ԽՕԽԷԼԷԲ (պալտըրը գարա), 4 տրամ ԱԷԿԼԷՕ (միյան .քէօքի), 4 տրամ ԼԽԽԷՆ (տէնիզ օթու), և ասոնք ամենը մէկէն բաղադրելով, ատեն ատեն խմել։

Առտուները, հաւկթին դեղնովը զարնուած դաղջ կաթ խմելու է։ Բնաւ չոր կերակուրներ ուտելու չէ։

Տարօրինակ հաղ մը կայ, ԽՕԽԷՔԼԷՐ (խօրոշ էօքսիւրիւյի), որ սովորաբար տղայք կբռնան. շատ վտանգաւոր է, և այս հիւանդութեան զոհ կերթան շատ պզտիկ տղայք, գլխաւորաբար ծնողաց անզգուշութեան պատճառաւ։ Այս հաղին առաջքն առնելու համար՝ բժիշկ պէտք է։ Ծնողք զգուշանալու են, որ այս հաղէն բռնուած մանկիկները հաղացած ատենին վեր վերցուցեն. որովհետև շատ մանկիկներ խեղդուած են՝ պառկած հաղալնուն պատճառաւ։ Կակղացուցիչ օշարակք (բէ.քթօրալ սիրօ) այս հաղին համար օրը 3–4 սուրճի դգալով կըտրուին։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Մարտ 18

Քոնսոլիտէ			14–18
Սօսիէթէ ժէնէրալի բաժինք	Անգ.	լիր.	5–10
Քրէտի » »	Օսմ.	»	2–58
Երկաթուղեաց՝ »		ֆր.	57–20
Թրամուէյ	Օսմ.	լիր.	1–65
1865ի փոխառութիւն		ֆր.	77–
1865ի »		»	75–
1869ի »		»	70–
1872ի »			22–50

ԴՐԱՄՔ, Օսմ. լիրան 100 էն

Մէտիտիյէ	104–50	Ռուսիոյ բօլ	89–
Մէթալիք	114–	Գաղղ. լիրա	88–18
Պղինձ	170–	Անգղ. »	110–50
Թղթադրամ	159–	Գրիմից	51–20

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԻՏԷԱՆ

Պ. ՏԸ ԳԱՄՕՐ

ՀԵՂԻՆԱԿ ՕԳՈՒԱՅ ՖԷՕՖԷ

Թարգմանիչ Գ. Զէլինկիրեան

Սոյն ընտիր վէպին երկրորդ՝ այն է վերջին հատորը Պոլիս հասած ըլլալով, կը ծախուի Ս. Ղ. և Եղմաճեան գրատունը Եէնի-ճ'ամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 1 ֆրանք 50 սանդիմ։

ԻԼԱՆ
ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Ասաքիրի շահանէյէ պիր սէնէ զարֆընտա մուպայաս օլունաճագ սէպպէնին պէհէր մահ ալընաճաք մըքտարլարընըն պահասը էրթէսի այլարըն իպթիտալարընտան հէր քաչ ղրուշա պալիզ օլուր իսկ պէրվէճէհի փէչին իւզլիւք քայիմէ իւզ ղրուշա օլարաք նիզամկյէ խազինէսինտէն վէրիլմէք վէ ագճէ ֆարգը նամըյըլա պահասընըն մէճմուինտէն եիւզտէ օն թէնգիլ քըլընմաք շարթը վէ շէրայիթի սայիրէյի մուքարրէրէսի իլէ թալիպի էօհտէսինտէ օլուպ մարտը ըումինին եէրմի իւչիւնճի չէհարշէնպիհ կիւնի քարարը քաթիսի վէրիլէճէյինտէն իթա իթմէյէ թալիպ օլանլարըն եէվմի մէզքիւրտէ Ցարը շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

17 մարտ 1877

Պապը Սէրասքէրի

—

Ասաքիրի շահանէ էլպիսէ անպարընտա միւթէրաքիմ քըրպընթըլար ֆիրուխթ օլունաճաղընտան իշթիրասընա թալիպ օլանլարըն մարտը ըումինին եէրմի պէրինճի փաղար էրթէսի կիւնիւ Ցարը շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

17 մարտ 1877

Պապը Սէրասքէրի

—

Պէհէր սէնէի ըումյէ մարտը իպթիտասընտան իթիպարէն՝ նիզամկյէ անպարլէրինին տէվրի ուսուլ վէ նիզամը իգթիզասընտան պուլունմուշ, վէ իշ պու տօղսան իւչ սէնէսի մարտընըն իպթիտասը կիւնիւ նիզամը վէճհ իլէ անպարլէրին տէվրինէ միւպաշէրէթ օլունմուշ օլմաղլէ՝ էօհտաը թայինաթընը տօղսան իլի սէնէսինտէն հէր նէ մըղտար էրզադ վէ սայիր մաթլուպը վար իսկ, այնէն թայինաթընը ալմագ իսթէյէնլէրին տէվր միւտէթի կիւզար իթմէքսիզին, հէման շիմտիտէն անպարլէրինէ միւրաճաաթ իլէ մ'աթլուպլէրինին իսթիհսալի, վէ տէվր միւտէթի կէչէր իսկ մաթլուպլէրինին պէտէլէն ալաճաղլէրի մալիւմլէրի օլմագ իւզրէ իլան օլունուր։

8 մարտ 1877

Պապը Սէրասքէրի

—

Ասաքիրի շահանէ լահմ թայինաթընտան պէտէլէն թէսվիյէսի լազըմ կէլէն մըղտարըն տօղսան իլի սէնէսի քէանուն սանիտէն իթիպարէն միւթէահիւտի միւսիւ՝ Գուբա թարաֆընտան սիմ մէճիտիյէ եէկիրմի ղուրուշ հիսապը իլէ դօնթրաթօ ահ.քեամընտան պուլունմուշ, վէ շէհրը մէզպուրտէն իթիպարէն պէտէլ ալաճաղլէր իչին միւթէահիւտի թարաֆընտան սիմ մէճիտիյէ եէկիրմի ղուրուշա վէրիլէճէկի տէրքեար պուլունմըշ իսկ տէ, թայինաթընը պէտէլէն արզու իտէնլէրէ միւթէահիւտ թարաֆընտան պու ֆիյաթ իլէ սիմ մէճիտիյէ վիրիլմէզսէ՝ քէյֆիյէթին Ցարը-շուրա Լէվաղիմ տայիրէսինէ պէ յան վէ իֆատէ օլունմասը լազըմ կէլէճէյի իլան օլունուր։

10 մարտ 1877

Պապը Սէրասքէրի

—

Ս. ԶԴ

Եէտիդուլէի դրսի Ս. Յակոբայ վանուց կից սրճարանը, որ աղդային Հիւանդանոցի սեպհական ստացուած.քն է, մէկ տարի պայմանաւ վարձու պիտի տրուի. ուզողը թուականէս մինչև ութ օր պէտք է դիմէ աղդ. Հիւանդանոցի դրասենակը ի Մեծ-Նոր խան միջն. թիւ 49, հարկ եղած սակարկութիւնն ընելու համար։

1877 մարտ 16 Գործակալ Աղդ. Հիւ. Գրասեն. Հիւան. Ս. Մ. Հէսարլեան
Մեծ-Նոր խան

Մէ-ըրոթը Նաբիթը Օսմանէյէ

Պու քիթապ տէվլէթը օսմանլիյէնին իպթիտայի սալթանաթընտան իշպու կիւնէ դատար հէր փատիշահընն միւտէթ սալթանաթը միւհիմ վուղուաթը իլէ հէր պիրինին մուաճէրէթի տէվլէթլերի պիլտիրիր պիր էսէր տիր։ Մէարիֆ մէճլիսինին ինթիխապ վէ բուխսաթի իլէ բիւշտիյէ մէքթէպլերի իչուն թապ օլունմուշ՝ մէնաֆիի ումումէ այիտ տիր։ Քէօփրիւ պաշընտա Մատթէոսեանընն տիւքեանլերինտէ վէ սայիր քիթապ սաթըլան մահալլերտէ, էճզասը 16 վէ միւճէլլէտի 18 ղրուշա սաթըլմագտա տը։

ԽՐԱՏՔ ԸՆՏԱՆԵԱՑ
ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ – ՈՐԴԻՔ. – ԸՆՏԱՆԻՔ

Արմաշու վարժարանին աշակերտ յարգոյ Յակոբոս Պ. Սրապեանի թարգմանած, և տեղւոյն տպարանէն ի լոյս ընծայուած Մէյնան Շալոնի Նշանաւոր հեղինակութիւնն է, որ երեք կարևոր կէտերու՝ ամուսնութեան, որդւոց և ընտանեաց վրայ կիսօսի, խիստ օգտակար է մեր ամեն կարդի աղդայնոց համար։

Կը ծախուի Պոլիս Զադմագճըլար փողոց թիւ 20, Յովսէփ Դավաֆեանի դրատունը։ Դին 1 ֆրանգ։

Խնդիր Աբեթելեան
Եւրոպայի արդի վէճերուն դէմ

Արմաշի վանական մամլէն ի լոյս ընծայեալ սոյն տետրակը՝ որ ամենայն ուշադրութեամբ ընթերցման արժանի է, մայրաքաղաքիս բոլոր հայ դրավաճառաց խանութները կծախուի ի դին 3 ղրշ։

Պոլիս, կամրջին դլուխը, Վալիտէ-Սուլթանի նորաշէն խանութներէն թիւ 4, Մատթէոսեանց խանութը, տաճկերէն, հայերէն և դաղղիերէն ամեն տեսակ հին և նոր հրատարակեալ գրքեր, դպրոցական և այլն, կդտնուին դոհացուցիչ դնով։

Շաբաթ, Տաղ և Աբեր

ԱՒԱԳ ՇԱԲԱԹՈՒ
Ի ՊԷՏՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՆԿԱՆՑ

Կծախուի ի տպարանի Հայաստանեայց և բոլոր հայ դրավաճառաց քով, ի դին 100 փարայ։ Վարժարանաց համար 100ին 10 ղեղչ կըլլայ։

Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ
ԳԻՇԵՐՕԹԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ՅԱՐՄԱՇ

Անցեալ օգոստ. ամսոյ 18րդ օրն վարժարանիս արձակուրդի օրերն աւարտեալ ըլլալով՝ աշակերտներն դարձած են և արդէն դասուց աւանդումն իսկ սկսուած է։

Այն ծնողաց կամ որբերու խնամակալ մարդասէր բարերարաց որ իրենց զաւակները կամ որբը վարժարանիս խնամոց յանձնել կուզեն կը յայտարարեմք թէ՝

Ս. Ղեւոնդեանց դիշերօթեայ վարժարանս յառաջադէմ վարժարաններու մեթոտով կանոնաւորեալ խիստ բարեկարգ վարժարան մ'է։

Կ. Պոլսէն և այլ քաղաքներէ՝ փոքր ինչ հեռաւորութիւնը թէև ոմանց համար անհաճոյ թուի, սակայն կերպ մը բարիքէ ծնողաց աչքէն և դրօսալից վայրերէ հեռի անփոփ և անդրաղ մտօք միայն ուսման պարապելու կողմանէ։

Ուսմանց տեսակներուն ամենը, նկարչութեան ամեն ճիւղերը և լեզուներէն երեք միայն, հայերէն, դաղղիերէն և տաճկերէն կաւանդուին, բայց ոչ բնաւ վեր ի վերոյ կամ թերի։

Ամեն ուսանելի առարկայից համար ընտիր և յաջողակ դասատուներ կան։

Աշակերտաց կեանքն և առողջութիւնը խնամով պահպանելու համար վարժարանս իւր մէջ յատկապէս մշտնջենաւոր բժիշկ կպահէ վկայեալ և յաջողակ, և բաւականաչափ դեղարան։

Աշակերտին տարեկան թոշակն է 52 լիրա օսմանեան որոյ մէջ են, երթևեկութեանց թղթատարութեանց և սովորական ագանելեաց ծախքէն զատ, ուրիշ բոլոր ծախքերը։

Արձակուրդի կամ պարապոյ օրերը բոլոր տարին միայն մէկ ամիս է և ո՛չ բնաւ աւելի։

Միշտ բաց է և բաց պիտի մնայ վարժարանս. որ ատեն որ ուզեն՝ ազատ են ծնողք կամ բարերարք իրենց զաւակները կամ սաները տալու։

Որոնք որ աշակերտ պիտի ղրկեն մեզ՝ պէտք է կամ Պոլիս Փունջ լրագրոյ արտօնատէր մեծ. Համբարձումի էֆ. Ալաճաճեանի հետ տեսնուին (Ալաճա-համամ Խանը Խալիլ թիւ 19) և կամ հոս մեզի հետ թղթակցին։

1876 սեպտ. 1 Խորէն Եպիսկ.
Ի Վանս Ս. Ս. Աստուածածնի Վ. Արմաշու.
յԱրմաշ

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, գլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կդգենու։

ONGUENT HOLLOWAY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վէրք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփէնչէ), սրունից և ստեանց վէրքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբսելի, հազի, սրտի բարտխման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահէք-գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Ն. 7՝ կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տոքթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքքսֆորտ փողոց թիւ 555։

ՊԱՏՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

1.—Փունջը ԶՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՝ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ դաւառաց համար։

3.—Վեց և երեք ամսոյ համար ալ բաժանորդ կընդունուի։

4.—Տեղական ու դաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճար է։

5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ դրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով։

6.—Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անդամի համար։ Աւելի ածան կըլլայ աւելի անդամներու համար։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է դիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պոլիս Ալաճա-Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳԻՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Բիզա փաղա խան թիւ 3